Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Սոցիալական պաշտպանության վարչարարության II ծրագիր

Վարկային համաձայնագիր թիվ 5398-AM

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվություն	6
Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն	7
Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armen
T + 374 10 50 09 64/61

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է Միջազգային Զարգացման Ընկերակցության (ՄԶԸ) 5398-AM վարկային համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող «Սոցիալական պաշտպանության վարչարարության II ծրագիր» (Ծրագիր) կից ներկայացված Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվությունը և ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունը՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով, Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Սոցիալական պաշտպանության վարչարարության II ծրագրի» դրամական միջոցների մնացորդը՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ընթացքում ստացված և վճարված դրամական միջոցները՝ համաձայն Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (ՀՀՀՀՄՍ)՝ *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով»*, Համաշխարհային Բանկի ուղեցույցների, ինչպես նաև ՄԶԸ 5398-AM վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (ԱՍՀՆ) համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ի վրա, որը վերաբերում է հաշվապահական հաշվառման հիմունքներին: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու ԱՍՀՆ ղեկավարությանը՝ Համաշխարհային Բանկի ուղեցույցներին և ՄՀԸ 5398-ԱՄ վարկային համաձայնագրի դրույթներին համապատասխանելու համար: Ուստի, Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Այլ հանգամանք

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար, աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որի 2020թ. հունիսի 10-ին թվագրված անկախ աուդիտորի եզրակացությամբ արտահայտվել է առանց վերապահման կարծիք՝ այդ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար

ԱՍՀՆ պատասխանատու է սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրատարակված Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՀՀՄՍ)՝ *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով»*, Համաշխարհային բանկի ուղեցույցների և ՄՀԸ 5398-ԱՄ վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացնում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

Grant Thornton

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք Ծրագրի ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ ԱՍՀՆ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք ղեկավար անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569 «GRANT THORNTON» «ГРАНТ ТОРНТОН»

30 հունիսի 2021թ.

Ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվություն

ԱՄՆ դոլար	Փաստացի		Պլանավորված		Տարբերություն		
	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ծրագիր
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ (ծանոթ. 6)	1,387,952						
Ավելացնել. Ստացված դրամական միջոցներ							
Վարկ 5398-AM (ծանոթ. 4)	1,800,000	9,709,887					
Կառավարության համաֆինանսավորում	474,984	1,851,164					
Ընդամենը ստացված դրամական միջոցներ	2,274,984	11,561,051					
Փոխարժեքային տարբերություն	(7,553)	(5,484)					
Նվազեցնել. Վճարված դրամական միջոցներ							
Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ և խորհրդատուների ծառայություններ, վերապատրաստում և Ծրագրի անուղղակի գործառնական ծախսեր՝ բացառությամբ Ծրագրի II.2. մասի	2,797,995	10,698,179	4,054,749	14,290,552	(1,256,754)	(3,592,373)	22,941,588
Ընդամենը վճարված դրամական միջոցներ	2,797,995	10,698,179	4,054,749	14,290,552	(1,256,754)	(3,592,373)	22,941,588
Դրամական միջոցների վերջնական մնացորդ (ծանոթ. 6)	857,388						

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. հունիսի 30-ին՝

Սամվել Մուրադյան

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր բաժնետեր

Ռիմա Բաբայան

Ֆինանսական կառավարման մասնագետ

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն

ԱՄՆ դոլար	Փաստացի		Պլանավորված		Տարբերություն		
	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ծրագիր
Մաս I: Համալիր սոցիալական աշխատանքության ծառայությունների տրամադրման ընդլայնում	2,569,633	8,119,542	3,804,651	11,286,657	(1,245,018)	(3,167,115)	20,268,000
Մաս II: Աջակցություն ստացողի գրաղվածության նոր ռազմավարության իրականացում	-	-	-	246,287	-	(246,287)	-
Մաս III: Կենսաթոշակային համակարգի արդիականացում	-	41,800	-	104,149	-	(62,349)	41,800
Մաս IV: ԱՍՀՆ վերլուծական կարողությունների և մշտադիտարկման ու գնահատման հանձնարարների իրականացում	7,478	413,120	8,051	465,306	(573)	(42,186)	556,563
Մաս I - IV: Համակցված բաղադրիչներ	-	590,730	-	590,730	-	-	-
Մաս V: Ծրագրի կառավարում	230,884	1,532,987	242,047	1,607,423	(11,163)	(74,436)	2,075,205
Ընդամենը	2,797,995	10,698,179	4,054,749	14,290,552	(1,256,754)	(3,592,373)	22,941,568

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեություն

«Սոցիալական պաշտպանության վարչարարության II ծրագրի» (Ծրագիր) թիվ 5398-AM վարկային համաձայնագիրը կնքվել է 2014թ. մայիսի 23-ին՝ Հայաստանի Հանրապետության և Միջազգային Զարգացման Ընկերակցության (ՄԶԸ) միջև: Վարկի գումարը կազմում է 13,466,950 Հատուկ Փոխարկման Իրավունք (ՀՓԻ):

Ծրագրի նպատակն է. (ա) բարելավել սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրումը և (բ) հզորացնել սոցիալական պաշտպանության նպաստներ վճարող և ծառայություններ տրամադրող մարմինների վերլուծական, մշտադիտարկման և գնահատման գործառույթները:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

<u>Մաս I. Համալիր սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրման ընդլայնում</u>

1. Ընտրված Ինտեգրված սոցիալական պաշտպանության կենտրոնների (ԻՍՊԿ) կառուցում, վերափոխում, վերանորոգում և վերազինում՝ ներառյալ. (ա) դրանց էլեկտրաէներգիայի, ջրի և կոյուղու համակարգի կատարելագործում, (բ) շենքերի սեյսմակայունության բարձրացում և (գ) հաշմանդամություն ունեցող անձանց համար պայմանների մատչելիության բարելավում:
2. ԻՍՊԿ-ի տեղեկատվական կառավարման համակարգի հզորացում՝ ներառյալ (ա) նշված նոր տեղեկատվական կառավարման համակարգի ներդրման աջակցություն, (բ) պահանջվող ծրագրակազմի մշակում, (գ) տեղեկատվական տեխնոլոգիաների տրամադրման աջակցություն:
3. Ծառայությունների մատուցմանն աջակցող և սոցիալական պաշտպանության ինտեգրված ծառայության իրականացմանն ուղղված օրենսդրության մշակում:
4. ԻՍՊԿ-ի անձնակազմի համար սոցիալական պաշտպանության ինտեգրված ծառայությունների մատուցման դասընթացների ապահովում, ներառյալ՝ (ա) ուսումնական նյութերի և ձեռնարկների մշակում, (բ) պրակտիկ դասընթաց ԻՍՊԿ-ների և ԱԱՀՆ-ի աշխատակիցների համար, (գ) մենթորություն և աշխատանքի վերապատրաստում:
5. Հասարակական իրազեկման աշխատանքների իրականացում սոցիալական պաշտպանության ինտեգրված ծառայությունների մատուցման ուղղությամբ, ներառյալ՝ (ա) իրազեկման աշխատանքներ և (բ) տպագիր նյութերի ձևավորում և արտադրություն:
6. Զբաղվածության պետական գործակալության (ԶՊԳ) և Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության (ԲՓԳ) կենտրոնական գրասենյակների վերափոխում, վերանորոգում և վերազինում, այդ թվում՝ (ա) նրանց էլեկտրաէներգիայի, ջրի և կոյուղաջրերի համակարգի կատարելագործում, (բ) շենքերի սեյսմակայունության բարձրացում, (գ) հաշմանդամություն ունեցող անձանց համար պայմանների մատչելիության բարելավում:

Մաս II. Աջակցություն սառացողի զբաղվածության նոր ռազմավարության իրականացում

1. ԶՊԳ-ի կարողությունների ուժեղացում կենտրոնացված ծառայություններ մատուցելու համար, այդ թվում՝ (ա) ԶՊԳ-ի անձնակազմի վերապատրաստման աշխատանքների իրականացում, (բ) ԶՊԳ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի բարելավում, ներառյալ ԳՈՐԾ համակարգի արդիականացում
2. Աշխատանքի շուկայի ծրագրերի պիլոտային աշխատանքներ, այդ թվում՝ (ա) ԱԱԶԾ-ի նախագծում և իրականացում՝ թիրախավորելով հմտությունների չտիրապետող երիտասարդներին , (բ) ինքնազբաղվածության և փոքր բիզնեսի ստեղծմանն ուղղված Ակտիվ աշխատաշուկայի ծրագրի (ԱԱԶԾ) նախագծում և իրականացում, (գ) ծրագրերի մասնակիցների վերապատրաստման և ուսուցման ապահովում, (դ) բիզնես պլանների մշակում
3. Կարիերայի կողմնորոշման ընդլայնում դեպի հատուկ հմտություններ՝ (ա) (Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն) ՄԿՄԿ-ի տեղեկատվական համակարգի կատարելագործման միջոցով, (բ) առցանց խորհրդատվության և հեռավար ուսուցման ծրագրերի մշակում, որոնք մատչելի կլինեն ՄԿՄԿ-ի կայքում: (գ) մասնագիտական կողմնորոշման փորձարկման համար ծրագրի մշակում և տեղադրում
4. Աշխատանքի և զբաղվածության ոլորտում իրականացվող բարեփոխումների և ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկման գործողությունների իրականացում:
5. ԶՊԳ- ի մոնիտորինգի և գնահատման կարողությունների ուժեղացում, այդ թվում՝ Ծրագրի II.2 մասի շրջանակներում փորձարկված ՄԿՄԿ-ների ազդեցության գնահատման իրականացում:

Մաս III. Կենսաթոշակային համակարգի արդիականացում

Սոցիալական ապահովության պետական ծառայության (ՍԱՊԾ) հիմնական բիզնես գործընթացների կատարելագործում և արդիականացում՝ ԻՍՊԿ-ի պահանջներին համապատասխան՝ ներառյալ (ա) տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում, (բ) ՍԱՊԾ-ի կենսաթոշակային տեղեկատվության էլեկտրոնային համակարգի մշակում, (գ) ռիսկերի վրա հիմնված խարդախությունների և սխալների վերահսկման համակարգի և ծրագրային ապահովման մշակում, (դ) ՍԱՊԾ-ի և ԻՍՊԿ-ի տարածաշրջանային կենտրոնների կարողությունների բարելավում կենսաթոշակային բարեփոխումների տարբեր ոլորտների և հիմնական և նոր բիզնես գործընթացների, այդ թվում՝ սոցիալական ծառայությունների մատուցման ինտեգրված համակարգի կենտրոնական վճարային ծառայությունների դասընթացների ապահովում, և (ե) ուսումնական շրջագայություն ՍԱՊԾ աշխատակիցների համար՝ սոցիալական ձեռնարկությունների կառավարման ծրագրակազմը վերլուծելու և ընտրված երկրներում դրանց իրականացումը վերլուծելու համար:

Մաս IV. ԱԱՀՆ վերլուծական կարողությունների և մշտադիտարկման ու գնահատման համակարգերի հզորացում

ԱԱՀՆ-ի մոնիտորինգի և գնահատման ստորաբաժանման կարողությունների ուժեղացում և սոցիալական պաշտպանության նպաստների և ծառայությունների մոնիտորինգի և գնահատման ինտեգրված համակարգի մշակում, ներառյալ՝ (ա) տեղեկատվական և տեխնոլոգիական սարքավորումների տրամադրում, (բ) պահանջվող ծրագրի մշակում, (գ) մոնիտորինգի և գնահատման մոդելի մշակում, ինչպես նաև սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումների տարբերակների վերաբերյալ տարբեր ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացում և (գ) վերապատրաստման դասընթացների իրականացում ԱԱՀՆ-ի մոնիտորինգի և գնահատման մասնագետների համար:

Մաս V. Ծրագրի կառավարում

Ծրագրի կառավարման աջակցություն՝ ներառյալ ֆինանսավորման տրամադրում (ա) Ծրագրի իրականացման գործակալության (ԾԻԳ) և Ծրագրի համակարգող ստորաբաժանման (ԾՀՍ) հավելյալ գործառնական ծախսերի համար, (բ) դասընթացների անցկացման համար, (գ) Ծրագրի աուդիտի համար:

Հոդված	Հատկացված վարկային միջոցներ (արտահայտված ՀՄԻ-ով)
Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ և խորհրդատուների ծառայություններ, վերապատրաստում և Ծրագրի աճողական գործառնական ծախսեր՝ բացառությամբ Ծրագրի II.2. մասի	13,466,950
	13,466,950

Մինչև 2020թ. հունվարի 1-ը Ծրագրի ֆիդուցիար մասն իրականացվել է ՀՀ Ֆինանսների նախարարության Ծրագրերի Իրականացման Վարչության (ԾԻՎ) կողմից: 2020թ. հունվարի 1-ից, համաձայն ֆինանսավորման համաձայնագրի 2019թ. դեկտեմբերի 26-ի լրացման, Ծրագրի ֆիդուցիար մասի լիազորությունները փոխանցվել են ԱՍՀՆ-ին:

ԱՍՀՆ-ի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական շենք 3:

2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

2.1 Համապատասխանություն

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների («ՀՀՀՀՄՍ»)՝ «*Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով*», Համաշխարհային Բանկի ուղեցույցների, ինչպես նաև թիվ 5398-ԱՄ վարկային համաձայնագրիհամապատասխան հոդվածների պահանջների:

Միաժամանակ, ԱՍՀՆ ներկայացնում է նաև հաշվետու ամսաթվի դրությամբ Ծրագրի ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ որպես լրացուցիչ բացահայտում, որը խրախուսվում է ՀՀՀՀՄՍ՝ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով», 2-րդ մասով (տե՛ս ծանոթ. 8):

2.2 Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներառում են՝

ա) 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվությունը, որտեղ առանձին ներկայացված են Համաշխարհային Բանկի և պայմանագրային գործընկերոջ միջոցները, և ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունը:

բ) Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ պարզաբանող ծանոթագրությունները (ներառյալ լրացուցիչ հաշվապահական հաշվառման քաղաքականություն և բացահայտումներ), ներառյալ

- ծանոթագրություններում ներառված ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումները,
- ծանոթագրություններում ներառված հատուկ հաշվի հաշվետվությունը,
- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, որտեղ ներկայացված են Ծրագրի կուտակված ֆոնդերը, բանկային մնացորդները, Ծրագրի այլ ակտիվները և պարտավորությունները, ինչպես նկարագրված է ծանոթագրություն 2-ում:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ծրագրի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ծրագրի շրջանակներում կատարված գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով (ներկայացման արժույթ):

Ծրագրի Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ԱՄՆ դոլարից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի նախորդ օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Համաշխարհային բանկի միջոցներից Ծրագրի գործընկերներին կատարված ԱՄՆ դոլարից տարբեր այլ արտարժույթով արտահայտված ուղղակի վճարումները գրանցվում են client connection (https://clientconnection.worldbank.org) համակարգի փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով այդ ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 522.59 ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 479.7 ՀՀ դրամ): Փոխարժեքային տարբերությունը ճանաչվում է ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվությունում և փոխարժեքային տարբերության կուտակված գումարը բացահայտվում է՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ «Փոխարժեքային տարբերություն» հոդվածում:

2.4 Ծրագրի ծախսեր

Ծրագրի շրջանակներում առաջացած ծախսերը ճանաչվում են հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով՝ դրամական միջոցների վճարման պահին: Ծախսերը ճանաչվում են ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվությունում որպես «վճարված դրամական միջոցներ»: Ի հավելումն, ծախսերի բացվածքը ըստ բաղադրիչների ներկայացված է ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունում:

2.5 Ծրագրի ֆինանսավորում

Թիվ 5398-ԱՄ վարկային համաձայնագրի շրջանակներում հատկացված ֆինանսավորումը գրանցվում է ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվությունում որպես «ստացված դրամական միջոցներ» և ճանաչվում է յուրաքանչյուր հաշվարման ժամանակ: Ի լրումն՝ ստացված ֆոնդերը բացահայտվում են Ծրագրի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում (տե՛ս ծանոթ. 8):

2.6 ՄԶԱ ֆինանսավորում

Վարկային համաձայնագրի համար ընդունելի ծախսերի ֆինանսավորման նպատակով Համաշխարհային Բանկը վճարումներ է կատարում՝ օգտագործելով հետևյալ վճարման մեթոդներից մեկը կամ մի քանիսը.

ա) Հատուցում

Բանկը կարող է հատուցել շահառուին՝ նրա սեփական միջոցներով կատարված ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով:

բ) Կանխավճար

Բանկը կարող է առհաշիվ վարկային վճարում կատարել շահառուի հատուկ հաշվին՝ ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով և դրանց կատարմանը զուգընթաց, որոնց համար հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն ավելի ուշ:

գ) Ուղղակի վճարումներ

Բանկը շահառուի հայցով կարող է վճարումներ կատարել ուղղակիորեն երրորդ անձանց՝ ընդունելի ծախսերի դիմաց:

դ) Հատուկ պարտավորագրեր

Բանկը կարող է վճարումներ կատարել երրորդ անձին հատուկ պարտավորագրի շրջանակներում ընդունելի ծախսերի փոխհատուցման համար շահառուի գրավոր հաստատված հայցով, որը համաձայնեցված է շահառուի և Բանկի կողմից:

3. Ծրագրի փակման ամսաթիվ

Համաձայն 2020 թ. ապրիլի 2-ով թվագրված նամակի, Ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2022թ. հոկտեմբերի 31-ը:

4. Թիվ 5398-ԱՄ վարկային համաձայնագրի ֆինանսավորում

ԱՄՆ դոլար

	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԾՄՀ և այլ ընթացակարգեր	2,177,609	8,587,496
Հատուկ հաշվի կանխավճար/(մարում)	(377,609)	1,122,391
	1,800,000	9,709,887

5. ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
ԱՄՆ դոլար

Դիմում	Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ և խորհրդատուների ծառայություններ, վերապատրաստում և Ծրագրի աճողական գործառնական ծախսեր՝ բացառությամբ Ծրագրի II.2. մասի
DA-18	106,650
DA-19	747,115
DA-20	100,547
Ընդամենը	954,312

6. Հատուկ հաշվի հաշվետվություն

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար

ԱՄՆ դոլար

Սկզբնական մնացորդ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ		1,387,952
Ավելացնել.		
Աճողական չբացատրված անհամապատասխանություն	-	
Վարկի համալրում տարվա ընթացքում	1,800,000	
	1,800,000	1,800,000
Նվազեցնել. Հատուկ հաշվից ՄՁԸ-ին փոխհատուցում տարվա ընթացքում		-
Հատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1)		3,187,952
Վերջնական մնացորդ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		857,388
Ավելացնել.		
Տարվա ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար	2,330,564	
Ծառայությունների վճարներ (եթե առկա են)	-	
	2,330,564	2,330,564
Նվազեցնել. Ստացված տոկոսագումարներ (եթե նրանք գրանցվել են հատուկ հաշվին)		-
Ընդամենը հաշվարկված կանխավճար (2)		3,187,952
Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2)		-

7. ԱՍՀՆ-ի կողմից ստացված գումարների և Համաշխարհային Բանկի փոխհատուցումների համադրում

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
ԱՄՆ դոլար

Հոդված	Դիմում	ԱՍՀՆ	Համաշխարհային Բանկ	Տարբերություն
Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ և խորհրդատուների ծառայություններ, վերապատրաստում և Ծրագրի անորակյալ գործառնական ծախսեր՝ բացառությամբ Ծրագրի II.2. մասի				
	DA-18	112,048	112,048	-
	DA-19	769,904	769,904	-
	DA-20	108,749	108,749	-
	DA-21	1,186,908	1,186,908	-
		2,177,609	2,177,609	-
Հատուկ հաշվի կանխավճար /(մարում)				
	DA-18	(112,048)	(112,048)	-
	DA-19	(769,904)	(769,904)	-
	DA-20	791,251	791,251	-
	DA-21	(286,908)	(286,908)	-
		(377,609)	(377,609)	-
Ընդամենը		1,800,000	1,800,000	-

8. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 2.1-ում՝ ԱՍՀՆ-ի քաղաքականությունն է Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստել համաձայն ՀՀՀՀՄՍ-ի՝ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով»: Այնուամենայնիվ, ԱՍՀՆ-ը ներկայացրել է նաև ֆինանսական վիճակի մասին առանձին հաշվետվություն՝ որպես բացահայտում, որը խորհուրդ է «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» ՀՀՀՀՄՍ-ում:

ԱՄՆ դոլար	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ		
Ծրագրի կուտակային ծախսեր	10,713,980	7,841,333
Կանխավճարներ	210,685	158,211
Մնացորդներ բանկային հաշիվներում	857,388	1,387,952
Ընդամենը ակտիվներ	11,782,053	9,387,496
Ֆոնդեր և պարտավորություններ		
Ծրագրի կուտակային ֆինանսավորում	11,561,051	9,286,066
Փոխարժեքային տարբերություն	8,171	19,268
Կրեդիտորական պարտքեր	212,831	82,162
Ընդամենը ֆոնդեր և պարտավորություններ	11,782,053	9,387,496